

## ՀԱԳՄՉ 03.30

Առաջին հրատարակություն  
1 հունվարի 2003թ.  
Ներառում է փոփոխություններ 1 և 2-ը

# Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման ուղեցույց

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/>) կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>:

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
Նյու Յորք, NY 10017  
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iii
Նախաբան.....	iv
Ներածություն .....	v
Ականագերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման ուղեցույց .....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	1
4. Հետազոտման դասակարգեր.....	2
4.1. Բուն հետազոտություն.....	2
4.2. Կիրառական հետազոտություն .....	2
5. Հետազոտման աշխատանքների խմբեր.....	2
5.1. Խնդրի վերլուծություն .....	2
5.2. Սահմանափակող գործոնների վերլուծություն .....	2
5.3. Հնարավոր տեխնոլոգիաների վերլուծություն .....	2
5.4. Հետազոտման արդյունքների հաղորդում .....	3
6. Հետազոտման հաստատությունները.....	3
6.1. Գիտական աշխարհ .....	3
6.2. Արդյունաբերություն .....	3
6.3. Ազգային հաստատություններ.....	3
6.4. Միջազգային հաստատություններ.....	4
7. Գործառնական վերլուծություն (ԳՎ).....	4
8. Հետազոտության և մշակման չափորոշիչներ .....	4
9. Ֆինանսավորում .....	5
10. Հրահանգներ և հսկում .....	5
10.1. Ազգային.....	5
10.2. Միջազգային.....	5
11. Պարտավորություններ.....	6
11.1. Միավորված ազգերի կազմակերպություն.....	6
11.2. Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) .....	6
11.3. Ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններ/ Օգտագործողներ .....	7
11.4. Դոնորներ.....	7
11.5. Հետազոտման և մշակման կազմակերպություններ և արդյունաբերություն .....	7
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր .....	8
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	9
Փոփոխությունների գրանցում .....	13

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

## Ներածություն

Հետազոտությունը գնումների գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Եվ իսկապես, դժվար է պատկերացնել այսօր հակաականային գործունեության ծրագրերում կիրառվող ցանկացած մի սարքավորում, սկսած ականաորսիչներից և GPS-ից ընդհուպ մինչև պաշտպանիչ համազգեստ, որ հետազոտության որոշակի գործողությունների արդյունքը չլինի: Առանց շարունակական հետազոտության անհնար կլինի բարելավել ականագերծման գործողությունների սարքավորումների ներկայիս սերունդը:

Սույն չափորոշիչը բացատրում է հետազոտության սկզբունքներն ու գործընթացները:

## Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման ուղեցույց

### 1. Ծավալ

Սույն չափորոշիչը սկզբունքներ է սահմանում և նախապատմություն ու ներածական ուղեցույց ապահովում ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) վնասազերծման առաջադրանքների և գործընթացների համար նախատեսված սարքավորումների հետազոտման պահանջների վերաբերյալ:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար:

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար:

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը:

#### **4. Հետազոտման դասակարգեր**

##### **4.1. Բուն հետազոտություն**

“Բուն հետազոտություն”<sup>1</sup> տերմինը սովորաբար վերաբերում է հետազոտման այնպիսի աշխատանքներին, որոնք կապված չեն որևէ առանձնահատուկ կիրառական ծրագրի հետ: Բուն հետազոտության արդյունքը վերջ ի վերջո կարող է հանգեցնել որևէ ապրանքի, սակայն դրա անմիջական նպատակն է սահմանել բնորոշ/համընդհանուր սկզբունքներ:

##### **4.2. Կիրառական հետազոտություն**

Կիրառական հետազոտությունը սկսվում է հստակորեն սահմանված խնդիրների և շուկայական հնարավորությունների վրա: Դրա կարևորագույն նպատակն է սահմանել հստակորեն սահմանված խնդիր լուծելու կիրառական տեխնոլոգիայի *հրազործելիությունը*<sup>2</sup>՝ սահմանված պայմանների շրջանակում, օրինակ՝ ծախսեր, ժամանակ և ռիսկ:

#### **5. Հետազոտման աշխատանքների խմբեր**

Հետազոտումն ընդգրկում է աշխատանքների չորս առանձին խումբ.

##### **5.1. Խնդրի վերլուծություն**

Հետազոտման առաջին հերթի աշխատանքն է խնդրի վերլուծությունը: Ականագերծման գործողությունների ոլորտում սա պետք է ընդգրկի համապատասխան բոլոր գործոնների հավաքագրում, համադրում և վերլուծություն, որոնք հնարավորություն կընձեռեն ճշգրտորեն սահմանել խնդիրը և նախանշել դրա ծավալը: Ականագերծման գործողությունների տեխնոլոգիայի առումով սա առաջին հերթին ներառում է Գործառնական կարիքների հայտարարության (ԳԿՀ) վերլուծություն: Այս կարևոր գործողությունը շատ հաճախ անտեսվում է կամ էլ ոչ բավարար ջանքերով է իրականացվում:

##### **5.2. Սահմանափակող գործոնների վերլուծություն**

Հետազոտման աշխատանքների երկրորդ խումբը ներառում է այն գործոնների վերլուծությունը, որոնք սահմանափակում են տեխնոլոգիայի լուծման ընտրությունը: Սահմանափակող նման գործոնները պետք է ներառեն գործնական հրամայականը, բնապահպանական պայմանները, ակննների և ՊՊՄ-ների վտանգը, արտադրության սահմանափակումները և աջակցությունը երկրի ներսում (այդ թվում նաև սպասարկում ու վերանորոգում, շահագործման հմտություններ և ֆինանսավորման առկայություն):

##### **5.3. Հնարավոր տեխնոլոգիաների վերլուծություն**

Հետազոտման աշխատանքների երրորդ խումբը ներառում է հնարավոր տեխնոլոգիաների վերլուծությունը՝ սահմանելու դրանց համապատասխանությունը, առկայությունն ու մատչելիությունը: Սա պետք է ներառի նոր բաղադրիչների, նյութերի, արտադրողական գործընթացների և չփորձարկված ծրագրային փաթեթի օգտագործման ռիսկի գնահատումը:

<sup>1</sup> Նաև երբեմն հղում է կատարվում որպես “հասարակ” կամ “ռազմավարական” հետազոտություն:

#### **5.4. Հետազոտման արդյունքների հաղորդում**

Հետազոտման աշխատանքների չորրորդ խումբը ներառում է հետազոտման արդյունքների հաղորդումը նրանց, ովքեր որոշում կայացնելու կարիք ունեն: Պարզ հետազոտությունը կարող է «փորձագիտական գնահատական» ներառել՝ սահմանելու անհրաժեշտ վավերականությունն ու լիազորությունը: «Փորձագիտական գնահատականը» սովորաբար իրականացվում է գիտական և/կամ մասնագիտական ամսագրերի և համաժողովների միջոցով:

Կիրառական հետազոտությունը սովորաբար ծրագրի հովանավորին է ներկայացվում պաշտոնական զեկույցի տեսքով՝ ըստ անհրաժեշտության հիմնավորելով տեխնոլոգիական ցուցադրումներով: Տեխնոլոգիական ցուցադրությունները տեսանելի մի ապրանք են ստեղծում, որը նպաստում է հետազոտման աշխատանքների արդյունքների նկատմամբ հավատ և վստահություն սահմանելուն: Դրանք հատկապես նպատակահարմար են դառնում, երբ օգտագործողը կարիք ունի վստահեցնելու նորարար կամ հեղափոխական տեխնոլոգիայի հնարավոր արժեքի վերաբերյալ:

### **6. Հետազոտման հաստատությունները**

#### **6.1. Գիտական աշխարհ**

Ավանդաբար հետազոտման աշխատանքների մեծ մասն իրականացվել է համալսարաններում և բարձրագույն ուսուցման տեխնիկական հաստատություններում: Նման աշխատանքների ֆինանսավորումը կատարվել է մի շարք աղբյուրներից՝ արտաքին աղբյուրներից շարունակաբար աճող ակնկալիքներով:

#### **6.2. Արդյունաբերություն**

Վերջին տարիներին՝ արդյունաբերության ընդարձակմանն ու զլաբալիզացմանը զուգահեռ, ինչպես նաև շուկայի կողմից այնպիսի տեխնոլոգիայի պահանջարկով, որը կնպաստի դրա ծավալմանն առավել արագընթաց կերպով, կիրառական հետազոտման որոլոում անցում նկատվեց գիտական աշխարհից դեպի արդյունաբերություն: Ներկայակերպական կիրառական հետազոտությունը (և ապրանքի մշակումը) ընդունված են այնպիսի արդյունաբերական ոլորտներում ինչպիսիքն են դեղագործականը, համակարգչայինը և ավիատիեզերականը, որոնցում ապրանքի մշակումը հատկապես դինամիկ է: Նման հանգամանքներում իրականացվող կիրառական հետազոտությունը կարող է զգալի ներդրումներ գրավել, և քիչ հավանական է, որ ցանկացած պահի դրությամբ առկա կլինի հնարավոր մրցակիթների համար՝ նույնիսկ այնպիսի մարդասիրական նպատակներով, ինչպիսիք են ականազերծման գործողությունները:

#### **6.3. Ազգային հաստատություններ**

Պետությունները ռազմավարական կարողությունների, օրինակ՝ պաշտպանության, ատոմային/միջուկային էներգիայի և հանրային առողջապահության, ազգային հետազոտման հաստատություններ են հիմնել: Ճնշումը շարունակաբար աճում է, որպեսզի ավելի շատ տեղեկություններ փոխանցվեն հանրային տիրույթ, այդ թվում նաև ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների ոլորտում պետության կողմից ֆինանսավորող հետազոտման արդյունքները, սակայն նման տեղեկությունների փոխանակման ընթացակարգերը դեռ ամբողջությամբ մշակման պիտի ենթարկվեն:



#### 6.4. Միջազգային հաստատություններ

Միջազգային հետազոտման հաստատությունները սովորաբար երկու կամ ավելի երկրների համատեղ հաստատությունների շահագործման արդյունք է լինում՝ փոխադարձ շահերի համար: Փոխադարձ նման շահերը կարող են նվազեցնել ընդհանուր ծախսերը կամ էլ նպատակները կարող են քաղաքական հրահանգավորում ունենալ:

Եվրոպական միության (ԵՄ) դեպքում միջազգային ընդհանուր հաստատությունների գաղափարը տարածում է ստացել՝ անդամ երկրների համար ընդհանուր շահերի խնդիրների բազմակողմանի շարքը բավարարելու և գնումների ողջ գործընթացի ընթացքում պահպանելու անկախ տեխնիկական փորձագիտական գնահատականը: Ականազերծման գործողությունների ոլորտի տեխնոլոգիաների հետազոտումը աջակցվում է Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտման կենտրոնի (ՀՀԿ, JRC Ispra) կողմից, որը տեղակայված է Իտալիայում: Այս հաստատությունները միննույն ժամանակ Եվրոպական հանձնաժողովի մասնակցության կորիզն են Մարդասիրական ականազերծման Փորձարկման և գնահատման միջազգային ծրագրում (ՓԳՄՕ): ՀՀԿ, JRC Ispra-ի դերի վերաբերյալ մանրամասները և ընթացիկ հետազոտման, գնահատման և համակարգման աշխատանքների ամփոփ նկարագիրը տեղադրված է <http://demining.jrc.it/> կայքէջում:

#### 7. Գործառնական վերլուծություն (ԳՎ)

ԳՎ-ն հետազոտության մի ոլորտ է, որը կիրառում է գիտականորեն հիմնված քանակական և որակական վերլուծությունը՝ կառավարման որոշումներին աջակցելու նպատակով: ԳՎ-ն օգտակար է հետագա պահանջների վերաբերյալ տեղեկացված և ստուգման ենթակա որոշումներ ընդունելու համար: Նման հանգամանքներում պետք է ձևավորվեն մի շարք խելամիտ սցենարներ, որոնք հիմնված կլինեն միտումների, միջոցառումների և հետևանքների տրամաբանական առաջընթացի վրա:

Կառուցվածքային մոտեցում է անհրաժեշտ համատեղ բառապաշար և ընդհանուր հղումների/հիմքերի շարան հիմնելու համար: Արդյունավետ ԳՎ-ն հիմնված է վստահելի, օբյեկտիվ ու հետևողական տվյալների, հստակ ու հիմնավորման ենթակա ենթադրությունների, համապատասխան դատողության և վավեր մեխանիզմների ու որոշումներին աջակից միջոցների վրա: Ակնհայտ է, որ ԳՎ-ի արդյունքները վճռականորեն կախված են տվյալներից և սկզբնական ենթադրություններից, և այդ պատճառով էլ հույժ կարևոր է, որ դրանք հիմնված լինեն ականազերծման գործողությունների թարմ փորձի վրա:

#### 8. Հետազոտության և մշակման չափորոշիչներ

Փորձարկման և գնահատման միջազգային ծրագրի (ՓԳՄՕ) նախաձեռնությունը ականազերծման գործողությունների հետազոտության և մշակման (R&D) միջազգային չափորոշիչների մշակման ուղղությամբ շարժման առաջին օրինակն է: Այն աջակցություն է ստանում Եվրոպական չափորոշիչների կառույցից (CEN) և դրանց 126 աշխատանքային խմբի (ԱԽ) գործողություններից: Այս տեխնիկական չափորոշիչները սահմանափակված չեն լինի ականների հայտնաբերման առաջատար սարքավորումներով, սակայն ավելի լայն կիրառում կունենան ականազերծման գործողությունների հետազոտության և մշակման (R&D) մեջ և ավելի ուշ կընդգրկվեն ՀԱԳՄՉ-երում:

## 9. Ֆինանսավորում

Շատ խոստումնալից տեխնոլոգիաներ չեն հետազոտվել/շահագործվել առկա ֆինանսավորման պակասի պատճառով: Չնայած նրան, որ ֆինանսները կարող են լինել, սակայն ներկայումս չկա պաշտոնական մի մեխանիզմ՝ դոնորներին տեխնոլոգիական հնարավորությունների հետ զուգորդելու և *հսկանակալ*: Դոնորները պետք է ակնկալեն, որ նոր տեխնոլոգիաները ցուցադրելու են չափման ենթակա բարելավումներ՝ գոյություն ունեցող մեթոդների նկատմամբ:

Տեխնոլոգիաների հետազոտության հավակնոտ ծրագրերի ֆինանսավորումն իրենից առանձին խնդիր է ներկայացնում: Նման հետազոտությունը, հատկապես եթե այն լայնածավալ ցուցադրումներ է ներառում, կարող է նշանակալի ֆինանսական պարտավորություններ ընդգրկել և ռիսկի ենթարկվել: Ավելին, տեխնոլոգիաների հետազոտության մեջ կատարվող ներդրումները երկարաժամկետ պարտավորություն են պահանջում, և ռեսուրսների մոբիլիզացիայի առկա մեթոդները ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի միջոցով նման պարտավորություն դոնորների կողմից չեն ապահովում: Այդուհանդերձ, կարիք կա սահմանելու նոր առանձնահատկություններ, որոնք կբավարարեն արդյունաբերությանը, հետազոտական կազմակերպություններին, օգտագործողների համայնքին և դոնորներին:

## 10. Հրահանգներ և հսկում

### 10.1. Ազգային

Ազգային մակարդակում ազգային ռեսուրսների և հետազոտական հաստատությունների օգտագործման վերաբերյալ որոշումները հոգուտ հակաականային գործունեությանը առաջնորդվում են կառավարության քաղաքականությամբ և գիտակցվող ազգային շահերով: Չնայած նրան, որ բազում պետություններ պարտավորություն են ստանձնել աջակցելու տուժած երկրներին՝ տեխնոլոգիաների բարելավման համար անհրաժեշտ տեղեկություններ և հաստատություններ տրամադրելով, սակայն նրանք դեռ պետք է ազգային ընթացակարգեր մշակեն՝ տեղեկություններն ու հաստատությունները ցանկացած պահի դրությամբ կազմ և պատրաստ ունենալու համար: Ազգային անվտանգությունը, մտավոր սեփականության իրավունքները և ֆինանսավորումը սահմանափակում են տրամադրման ենթակա տեղեկությունների ծավալն ու որակը:

### 10.2. Միջազգային

Միջազգային մակարդակում գոյություն ունի մի շարք ֆորումներ՝ միջազգային քաղաքականության մշակման համար, որը (ուղղակի և անուղղակի) հրահանգներ ու հետազոտության վերաբերյալ համագործակցություն է ապահովում: Դրանք հիմնականում գոյություն ունեն տարածաշրջանային, պաշտպանության կամ առևտրային առկա խմբավորումներում, օրինակ՝ EU, OAS, NATO, WEU և PfP:

1998թ-ի մայիսին Վաշինգտոնում կայացած Մարդասիրական ականագերծման համաժողովի ժամանակ Եվրախորհուրդը և ԱՄՆ-ն համաձայնության եկան (այլ գործընկերների հետ) համատեղ աշխատելու տեխնոլոգիական նախաձեռնությունների լայն շրջանակում, այդ թվում նաև հետազոտության և մշակման R&D ընդհանուր չափորոշիչների մշակումը (տես բաժին 8-ը) և տեխնոլոգիաների ցուցադրման միջազգային նախագծերի համատեղ ծրագիրը: Նման նախաձեռնությունը պաշտոնական կազմակերպման լավ օրինակ է ծառայում միջազգային համագործակցությունը բարելավելու հետազոտության ոլորտում, որն անհրաժեշտ է ականագերծման գործողությունների տեխնոլոգիաների համար:

Փորձարկման և գնահատման միջազգային ծրագիրը (ՓԳՄՉ) ստույգ արդյունքներից մեկն է, սակայն դեռ իր մշակման վաղ փուլում է գտնվում: Երկրորդը Ականազերծման տեխնոլոգիաների տեղեկատվական ֆորումն է (ԱՏՏՖ), որը մեկնարկվել է Կանադայի կողմից՝ Եվրոպական հանձնաժողովի և ԱՄՆ-ի հետ միասին: Այդ ժամանակվանից դրան են անդամակցում ՄԱԿԱՕ-ը, ՄԱԺՄԿ-ն և այլ պետություններ: Այս Ֆորումը նախատեսում է համակարգված, բազմալորտային հնարավորություն ընձեռել՝ սկանազերծման տեխնոլոգիաներում բացթողումների պարզորոշման համար, գաղափարների համատեղ իրականացվող փոխանակման համար, միջազգային ծրագրերի համագործակցության վրա հիմնված համակարգման ու պլանավորման համար և սկանազերծման գործողությունների տեխնոլոգիաների ոլորտում առաջընթացի վերանայման համար: Բացի էլեկտրոնային մատյանից և տեխնոլոգիաների ուղղվածությամբ աշխատաժողովների աջակցությունից ԱՏՏՖ-ը նաև ծառայություն կապահովի որպես տեխնոլոգիաների տեղեկատվության «հաշվարկային պալատ»:

ՄԱԿ-ը պարտավորություն է կրում և մանդատ ունի՝ հրահանգներ և ուղեցույց ապահովելու: Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների վերաբերյալ ՄԱԿ-ի ներկայիս պաշտոնական քաղաքականությունն ընդհանուր ուղեցույց է տրամադրում հետազոտության սկզբունքների և գերակայությունների վերաբերյալ, իսկ հետագայում առանձնահատուկ ուղեցույց կապահովի կիրառական հետազոտության աշխատանքների վերաբերյալ:

## **11. Պարտավորություններ**

### **11.1. Միավորված ազգերի կազմակերպություն**

Միավորված ազգերի կազմակերպությունն առկա ռեսուրսների շրջանակում պետք է պատասխանատու լինի՝

- ա. Ականազերծման գործողությունների տեխնոլոգիայի մշակման վերաբերյալ ռազմավարական քաղաքականության մշակման համար;
- բ. Դոնորների, օգտագործողների, հովանավորների և մշակողների միջև համակարգման համար;
- գ. Ականազերծման գործողությունների տեխնոլոգիայում ներդրում կատարելու գերակայությունների և սկզբունքների մշակման համար:

Միավորված ազգերի կազմակերպությունն առկա ռեսուրսների շրջանակում պետք է պատասխանատու լինի՝

- ա. Հետազոտման բնորոշ աշխատանքների համակարգման համար:

### **11.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

ԱԳԱՄ-ը պետք է պատասխանատու լինի՝

- ա. Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման վերաբերյալ ազգային չափորոշիչների, կանոնակարգերի և ընթացակարգերի ստեղծման և պահպանման համար: Այս ընթացակարգերը պետք է համահունչ լինեն ՀԱԳՄՉ և ազգային ու միջազգային այլ համապատասխան չափորոշիչներին, կանոնակարգերին և պահանջներին:

բ. Հետազոտության արդյունքների հիման վրա ականագերծման գործողությունների համապատասխան տեխնոլոգիայի ընտրության և հավաստագրման համար, որը հատուկ է նրանց ազգային պայմաններին և պահանջներին:

**11.3. Ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններ/  
Օգտագործողներ**

Ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպությունները (Օգտագործողները) պետք է՝

ա. Համագործակցեն այլ օգտագործողների հետ՝ ապահովելու, որ առանձին տեխնոլոգիաների շահագործման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հասանելի լինի բոլոր շահառուներին:

**11.4. Դոնորներ**

Դոնորները պետք է՝

ա. Ապահովեն, որ ականագերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտության և մշակման աշխատանքները, որոնց նրանք աջակցում են, համապատասխանեն Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված սկզբունքներին և գերակայություններին;

բ. Ապահովեն, որ ռիսկերի ամբողջական և պաշտոնական գնահատումներն իրականացվեն նախքան հետազոտման և մշակման աշխատանքներում ներդրումներ կատարելը:

գ. Ապահովեն ջանքերի համընկնման նվազագույն աստիճանը հետազոտման և մշակման մրցակից ծրագրերի միջև:

**11.5. Հետազոտման և մշակման կազմակերպություններ և արդյունաբերություն**

Ականագերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման և մշակման կազմակերպությունները և հարակից արդյունաբերությունը պետք է՝

ա. Համագործակցեն նմանատիպ տեխնոլոգիական ոլորտների հետազոտման և մշակման ծրագրերի հետ (առևտրային գաղտնիության շրջանակներում):

բ. Ջանքեր գործադրեն և մրցակից ոլորտների փոխարեն ստեղծեն հետազոտման լրացուցիչ և խորացված ասպարեզներ:

## Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 03.10 Ականազերծման գործողությունների սարքավորումների գնման ուղեցույց;
- բ) ՀԱԳՄՉ 03.20 Գնումների գործընթաց;
- գ) ՀԱԳՄՉ 03.40 Ականազերծման գործողությունների սարքավորումների փորձարկում և գնահատում:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

## Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասպատումներ

### B.1.

#### **Կիրառական հետազոտություն**

Հետազոտություն, որ կենտրոնանում է հստակորեն սահմանված խնդիրների և շուկայական հնարավորությունների վրա:

Նշում. Դրա կարևորագույն նպատակն է սահմանել հստակորեն սահմանված խնդիր լուծելու կիրառական տեխնոլոգիայի *իրագործելիությունը*՝ սահմանված պայմանների շրջանակում, օրինակ՝ ծախսեր, ժամանակ և ռիսկ:

### B.2.

#### **Համագործակցություն**

*ականագերծման գործողությունների սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ...* այն գործողությանը, որը վերաբերում է միմիայն երկու կամ ավելի կազմակերպությունների կողմից ընդհանուր սարքավորումների գնմանը:

### B.3.

#### **Վաճառքում գտնվող**

*ականագերծման գործողությունների սարքավորումների գնման համատեքստում այս տերմինը վերաբերում է ...* այն սարքավորումներին, որոնք գոյություն ունեն անմիջապես արտադրողի մոտ և չեն պահանջում որևէ այլ հետագա մշակումներ նախքան գործածության մեջ մտնելը՝ բացի չնչին ձևափոխություններից:

### B.4.

#### **Ծախսարդյունավետություն**

համակարգի գործնական աշխատանքի և դրա կիրառման ողջ ընթացքի ընդհանուր ծախսի միջև հարաբերակցության բավանսի գնահատական է:

### B.5.

#### **մշակում**

նախագծի այն փուլը (և դրա հետ փոխկապակցված ծախսերը), որը նախորդում է արտադրությանը և վերաբերում է դիզայնի մշակմանը, որը բավարար է արտադրության մեկնարկի համար:

### B.6.

#### **դոնոր**

Ֆինանսավորման բոլոր աղբյուրները, այդ թվում նաև ականապատված պետությունների կառավարությունը:

### B.7.

#### **սարքավորում**

ֆիզիկական, մեխանիկական, էլեկտրական և/կամ էլեկտրոնային համակարգ, որն օգտագործվում է օժանդակելու մարդկային գործողություններին, ընթացակարգերին և փորձին:

### B.8.

#### **Ստանդարտների միջազգային կազմակերպություն (ISO)**

Նշում. 130-ից ավել երկրների ազգային մարմիններից կազմված համաշխարհային ֆեդերացիա: Դրա աշխատանքի արդյունքում ստեղծվում են միջազգային համաձայնագրեր, որոնք

հրատարակվում են որպես ISO չափորոշիչներ և ուղեցույցներ: ISO-ն ոչ պետական/հասարակական կազմակերպություն է և իր կողմից մշակված չափորոշիչները կամավոր են, չնայած դրանցից մի քանիսը (հիմնականում նրանք, որոնք վերաբերում են առողջապահության, ապահովության և բնապահպանական խնդիրներին) ճանաչվել և ընդունվել են շատ երկրների կողմից որպես իրենց կանոնակարգման հիմքերի մի մաս: ISO-ն աշխատում է մարդկային գործողությունների ողջ շրջանակում, և դրա խնդիրներից ու գործընթացներից շատերը, որոնք նպաստում են ակնազեղման գործողություններին, ունեն համապատասխան չափորոշիչ: ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների ցանկը բերված է ISO կատալոգում՝ [www.iso.ch/info/catinfo/html](http://www.iso.ch/info/catinfo/html) կայքէջում:

Նշում. Ակնազեղման գործողությունների վերանայված չափորոշիչները մշակվել են՝ ISO-ի չափորոշիչներին և ուղեցույցներին համահունչ լինելու նպատակով: ISO-ի ձևաչափի և լեզվի/ոճի որդեգրումը նշանակալի առավելություններ է ընձեռում, այդ թվում նաև արտաքին տեսքի հետևողականություն, միաջգայնորեն ճանաչված տերմինների կիրառում և միջազգային, ազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ավելի լայն ճանաչում, որոնք արդեն ընտելացել են ISO-ի չափորոշիչների և ուղեցույցների շարքին:

### B.9.

#### Ներդրումների գնահատական

Ծախսերի նպատակները սահմանելու գործընթացն է, այդ նպատակներին հասնելու այլընտրանքային ուղիների պարզորոշում և գնահատում, արդյոք որ ուղու միջոցով կստացվի դրամի ամենաբարձր արժեքը:

### B.10.

#### Ակնազեղման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ակնապատված յուրաքանչյուր երկրի կառավարության վարչություն(ներ), կազմակերպություն(ներ) կամ հաստատություն(ներ), որոնք ստանձնել են ակնազեղման գործողությունների կանոնակարգման, կառավարման և համակարգման պարտականությունները:

Նշում՝ Դեպքերի մեծամասնությունում ազգային ՀԱԳ-ը կամ դրա համարժեքը կգործի որպես ԱԳԱՄ կամ դրա անունից:

Նշում՝ Որոշակի իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ-ի կամ որոշ այլ ճանաչված միջազգային կազմակերպության համար անհրաժեշտ և նպատակահարմար կարող է լինել ստանձնել ԱԳԱՄ-ի որոշ կամ բոլոր պարտականությունները և իրագործել դրա որոշ կամ բոլոր գործառույթները:

### B.11.

#### Գործառնական վերլուծություն (ԳՎ)

Գործառնական հետազոտություն

Հետազոտման մի ոլորտ, որը գիտականորեն հիմնավորված քանակական և որակական վերլուծություն է կիրառում՝ աջակցելով կառավարման որոշումներին:

### B.12.

#### Գործառնական հետազոտություն

Տես Գործառնական վերլուծությունը (ԳՎ)

### B.13.

#### Գնումներ

Հետազոտման, մշակման և արտադրության կամ գնման գործընթաց, որի արդյունքում սարքավորումը ճանաչվում է որպես օգտագործման համար հարմար և շարունակվում է պահեստամասերի և հետ-արտադրական ծառայությունների ապահովմամբ տվյալ սարքավորման գործածման ողջ ընթացքում:

### B.14.

**Նախատիպ**

Սարքավորում, բաղադրիչ կամ ենթա-բաղադրիչ, որը կառուցվել է հնարավորինս մոտ վերջնական դիզայնին և ստեղծված չափորոշիչին:

Նշում՝ Նախատիպերն օգտագործվում են՝ աջակցելու վերջնական արտադրության չափորոշիչի մշակմանը և/կամ ցուցադրելու գործողության կամ առանձնահատկությունների համաձայնեցվածությունը:

**B.15.**

**Բուն հետազոտություն**

հետազոտման այնպիսի աշխատանքներ, որոնք կապված չեն որևէ առանձնահատուկ կիրառական ծրագրի հետ: Պարզ հետազոտության արդյունքը վերջ ի վերջո կարող է հանգեցնել որևէ ապրանքի, սակայն դրա անմիջական նպատակն է սահմանել բնորոշ/համընդհանուր սկզբունքներ:

**B.16.**

**Հետազոտություն**

Համակարգված հարցում, քննում և փորձարկում՝ փաստեր և սկզբունքներ սահմանելու նպատակով:

**B.17.**

**Հովանավոր**

Սարքավորումների փորձաշրջանի հովանավորն այն հաստատությունն է, որը պահանջում է փորձաշրջանի իրագործումը:

Նշում՝ Ամենայն հավանականությամբ սա կլինի միջազգային կազմակերպություն, ազգային ՀԱԿ, դոնոր կամ ականազերծող կազմակերպություն:

**B.18.**

**Գործառնական ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ)**

Մշտական չափորոշիչ ընթացակարգեր (ՄՉԸ)

Հրահանգներ, որոնք սահմանում են գործնական առաջադրանքը կամ աշխատանքը կատարելու նախընտրված կամ ներկայումս ստեղծված մեթոդը:

Նշում. Դրանց խնդիրը կազմակերպության ներսում կարգապահության, միաձևության, փոխկապվածության և ընդհանրության ճանաչման և չափման ենթակա մակարդակների խթանումն է՝ նպատակ ունենալով բարելավելու գործնական արդյունավետությունն ու ապահովությունը: Գործառնական ստանդարտ ընթացակարգերը (ԳՍԸ) պետք է արտացոլեն տեղական պահանջներն ու հանգամանքները:

**B.19.**

**Փորձարկում և գնահատում (ՓԳ)**

Աշխատանքներ, որոնք առնչվում են ապարատային ապահովման և ծրագրային ապահովման փորձարկմանը:

Նշում. Աշխատանքները ներառում են ընթացակարգերի և չափորոշիչների ձևավորումն ու կիրառումը, տվյալների նվազեցումն ու մշակումը, փորձարկման արդյունքների ու մշակված տվյալների գնահատումն ու գնահատականն ըստ չափանիշների, օրինակ՝ սահմանված չափորոշիչներ և առանձնահատկություններ:

**B.20.**

**ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՕ)**

ՄԱԿ-ի կազմում կարևոր մի հանգույց՝ ականների հետ կապված բոլոր գործողությունների համար:

Նշում. ՄԱԿԱՕ-ը մի գրասենյակ է ՄԱԿ-ի Քարտուղարության կազմում, որը միջազգային հանրության առջև պատասխանատու է ՀԱԳՄՉ-երի մշակման և պահպանման համար:



---

Նշում. UNICEF-ը կարևոր հանգույց է ԱՎԻ-ի գծով՝ ՄԱԿԱԾ-ի ընդհանուր համակարգման ուղեցույցների շրջանակում:

**B.21.**

**Օգտագործող**

Անհատ կամ կազմակերպություն, ով կշահագործի սարքավորումը:

Նշում. Ականագերծման գործողությունների նպատակով “օգտագործողը” կարող է նաև բնորոշվել որպես “ազգային, առևտրային և ՀԿ օգտագործողների կարիքների վերաբերյալ տեղեկացված և հեղինակավոր կարծիք ունեցող համակցված մի մարմին՝ այսօր և ապագայում”:

## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՉ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1 դեկտեմբերի 2004թ.	1. Ֆորմատի փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություններ: 3. Փոփոխություններ տերմիններում, սահանումներում և հապավումներում ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՉ-ի համահունչ լինելը ՀԱԳՄՉ 04.10-ին:
2	1 օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/ավելացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. 5.2 բաժին, “սպառնալիք” տերմինի հետացում: 3. “Ականներ <b>և ՊՊՄ-ներ</b> ” տերմինի ավելացում: